ՇԱՀՆԱԶԱՐ.—Ըստ ոմանց Վերին գեղ, որ վերջինս հայերը կը յորջորջեն։ Սա ևս Շեռեանայ ձախ ափին վերայ 15 վայրկեան հեռի, գետը նախ գիւղի եզրէն կը հոսէր, այժմ հեռացած է ի հարաւ և գիւղի շուրջն թողած է քարոտ արտօրայք։

Գիւղս ունի ընտիր աղբիւրներ նաև բերրի քաւշան մի՝ որ գիւղի հիւսիսն տարածուած է նման Մարտոցի, որ նորա սահմանակից է յարևելից։

Գիւղիս արևելեան և արևմտեան կողմերն տեսայ երկու գերեզմանատուն. նաև քրդաց դռներու առջև տեսայ յիշատակարաններով լեցուն տապանաքարեր, այս գերեզմանատան մէջ կային կէս մի հողի տակ ծածկուած տապանաքարեր, զորս պրտրտելու արձանագրութիւններն ընդօրինակելու համար մեծ դժուարութիւն կայր, քրդական մոլեռանդութիւնը չէր ներէր։

Այս գիւղացիք ևս նախ Մանազկերտ ապա տեղս և ուստի ևս Լորի գաղթելով գիւղ մի շէնցուցած են, և ի յիշատակ իւրեանց գիւղին Շահնազար անուանած են, զորս ակնատեսք այս օր կենդանի կան։

ԲԻՒՐԱՊԱՏ.—Բիւրապատ ըստ Հայոց հնչմամբ, կը նշանակէ բիւրք շրջապատած, ըստ քրդաց կը նշանակէ ծերունւոյ շէնցուցած վայր, կամ կապուած ծեր։

Այս գիւղի արևելեան հիւսիս ¼ ժամ հեռաւորութեան վերայ կը գտնուի բլուր մի, որոյ գագաթն բերդ մի։ Ունի սրբատաշ քարեր, զորս մեծաւ մասամբ գիւղացիք քանդած են, նաև մէջն տեղ տեղ պեղած գտած են մեծամեծ կարասներ, ոմանք դատարկ՝ ոմանք